

Սակայն հանրամատչելի գրքոյկները պէտք է գրուած լինեն թեթեւ ու կենդանի ոճով և, եթէ ինքնուրոյն չեն, պէտք է թարգմանուած լինեն նոյնպիսի ոճով: Մինչդեռ պրոֆ. Բերդնիկովի գրքոյկը գրուած է ուրա պրոֆէսորների մեծամասնութեանը յատուկ անհոտ ու անհամ ոճով, որով կարելի է դրել միայն արձանագրութիւններ, և թարգմանուած է «ճեմարանական» ջերմոցային ոճով, որի արժանաւորութիւնը կանոնաւորութիւնն է, իսկ պակասութիւնը՝ խօսակցական լեզուին յատուկ կենդանութիւնից զուրկ լինելը:

Թարգմանութեան պակասութիւններից մէկն էլ ստրկականութիւնն է, որ հասնում է այն աստիճանի, որ ուսուցիչ безопасность բառը «անվտանգութիւն» է թարգմանած, մինչդեռ «անվտանգութիւն» կը նշանակէ ոչ թէ ապահովութիւն, այլ վտանգաւոր չը լինելը:

Այն էլ պէտք է նկատել, որ գիտական բառերի թարգմանութիւնը տեղ-տեղ անյաջող է, տեղ-տեղ էլ հակասական (նոյն բառը երկու տեսակ է թարգմանուած): Աչքի է ընկնում մասնաւոր процессия բառի սխալ թարգմանութիւնը, որի շնորհիւ գրուածքի իմաստը չի թելուծւում է. «արգելում է կրօնական յուզարկաւորութիւններ (процессия) անել եկեղեցուց դուրս...» Յուզարկաւորութիւն կը նշանակէ միմիայն похоронная процессия.

Մոռացայ ասել, որ պրոֆ. Բերդնիկովը լուսաբանում է հարցը յետադիմական տեսակէտից:

Տ. Յ.

Պ. ԴԱՂԲԱՇԵԱՆԻ ՊԱՏԱՍԽԱՆԻ ԱՌԹԻՒՆ *).

Պ. Դաղբաշեանը մեր գրախօսութեան դէմ նրա ուս-հայերէն բառարանի մասին («Մուրճ» 1902 թ. սեպտեմբեր) տպել է մի պատասխան («Մուրճ», հոկտեմբեր), որը մենք առանց ուշադրութեան կը թողնէինք, եթէ «Մուրճի» ընթերցողները բոլորն էլ լեզուային և բառարանագրական հարցերին լաւ ծանօթ լինէին և պ. Դաղբաշեանի «Պատասխանը» կարգալիս՝ ուշի ուշով նրան համեմատէին մեր գրախօսութեան հետ: Բայց քանի որ այսպէս չէ լինում, պ. Դաղբաշեանի պատասխանը ընդունակ է

*) Խմբագրութիւնս մինչև այժմ անկարող եղաւ տպել այս յօդուածը, որ մօտ երկու ամիս առաջ է գրուած: Ծ. Խ.

չատ շատերին մոլորեցնելու։ Ուստի և մենք ստիպուած ենք մեր գրախօսութեան պատիւը պաշտպանել։

Նախ խօսինք պատասխանի մի քանի վիճաբանական յատկութիւնների մասին։

Պ. Դաղբաշեանը լաւ չէ վարւում նրանով, որ չէ յայտնում, թէ իր պատասխանի մէջ չօչափում է մեր գրախօսութեան միայն այն կէտերն ու օրինակները, որոնք ինքը սխալ է համարում, իսկ ինչ որ ուղիղ է համարում՝ նրանց մասին լռում է։ Նա այս չէ յայտարարում, և ընթերցողին համոզելու համար, թէ ինքը ազնուաբար հրապարակապէս ընդունում է մեր դիտողութիւններից իրան ուղիղ թուած կէտերն ևս՝ նա յիշում է հինգ հատ քառ, որոնց մէջ ինքը սխալուած է եղել բարանում, մենք ուղղել ենք, և ինքն ընդունում է մեր ուղղածը։

Այդ բառերն են՝ «Ժպիրհ», «խոչընդոտ», «ճերգոյական», բառերի ուղղագրութիւնը, «ТОРГЪ» բառի նշանակութիւնը, «հաւատադրութ» բառի աւելորդ գործածութիւնը։ Իւրօք է գալիս, գոնէ պ. Դաղբաշեանը հաւատացնում է ընթերցողին, որ մեր 16 երես գրախօսութեան մէջ միայն հինգ քառի մասին մենք ուղիղ դիտողութիւն ենք արել, իսկ մնացածներում... սխալուել ենք կամ բժախնդրութիւն ենք արել։ 16 երեսում միայն հինգ բառ ուղիղ։ Սա խօ խայտառակութիւն է։

Բայց մի խորամանկութիւն կայ այստեղ։ Պ. Դաղբաշեանը հրապարակաւ 5 բառի վերաբերմամբ մեր դիտողութիւնն ընդունելով՝ այնուհետև լռելեայն կուլ է տալիս մեր բազմաթիւ ու կարեւոր դիտողութիւնները նրա սխտեմի այս կամ այն պալասութեան մասին։ Օրինակ՝ մենք յայտնել ենք, որ անհրաժեշտ էր բառարանից դուրս ձգել՝ մաքուր հասարակութեան ու գրականութեան մէջ բնաւ չը գործածուող անպարկեշտ և անվայել բառեր (օրինակները ցոյց ենք տուել երեսներով)։—յայտնել ենք և ապացուցել օրինակներով, որ պ. Դաղբաշեանը բազմաթիւ օտարազգի բառերի առաջ չէ դնում ցուցում նրանց օտարազգի լինելու մասին, և որ այս անհետևողութիւնը մոլորութեան մէջ կը ձգէ բառարանը գործածողին։—յայտնել ենք և ապացուցել, որ պ. Դաղբաշեանի բառարանը մի անսխտեմ, անհետևողական աշխատութիւն է նրանով, ոչ որ բացատրական է և ոչ թարգմանական, այլ մի խառնուրդ, որ վատ է ազդում բառարանը գործածողի վրայ։—յայտնել ենք և օրինակներով ցոյց տուել, որ պ. Դաղբաշեան ի չարն է գործ դնում գրաբար և նոր չինուած բառեր ու գրաբար ձևեր, որոնցից կարելի էր շատ անգամ խոյս տալ։—յայտնել ենք և ապացուցել, որ պ. Դաղբաշեանի բառարանը պարունակում է անծիշտ, անորոշ բա-

ցատրութիւններ լեզուաբանական տեսակէտից—և այս բոլորի մասին և ոչ մի խօսք չէ ասում պ. Դաղբաշեանը:

Այս լաւ չէ: Նա կամ պէտք է հրապարակաւ ընդունէր և՛ այս նկատողութիւնները, ինչպէս ընդունել էր այն հինգ բառը, կամ պէտք է չընդունէր ու հերքէր, ինչպէս վարուել է մեր շատ նկատողութիւնների վերաբերմամբ:

Լաւ չէ վարում պ. Դաղբաշեանը և հերքելու մեթօդով:—Մեր գրականութեան մէջ մենք ոչ թէ պատահական բառերի վրայ էինք կանգ առել, ոչ թէ բառեր քննադատել, այլ բառաւորանի սխառնի պակասաւոր կողմերը.—երեք պակասաւոր կողմ՝ ռուսերէնի բաժնում և բազմատեսակ պակասաւոր կողմեր հայերէնի բաժնում, և մեր դատողութիւնները բացատրելու և ապացուցանելու համար բերել էինք ամեն մի պակասաւոր կողմի համար մի քանի օրինակ: Վերջն էլ աւելացրել էինք, թէ մենք նայել ենք բառարանից հազիւ մի քառասուն երես (այսինքն՝ տպուած երկու պրակներն հազիւ եօթներորդ մասը), և մեր նկատած բոլոր օրինակներն էլ չենք բերել: Ուրեմն մեր նկատողութիւնները հերքելու երկու ճանապարհ կար.—կամ պէտք էր հերքել մեր սկզբունքները իբրեւ սխալ, կամ՝ մեր սկզբունքները ուղիղ ճանաչելու դէպքում՝ պէտք էր մի առ մի հերքել բոլոր օրինակները, որոնք բերուած էին իբրեւ ապացոյց, թէ այս-ինչ սկզբունքը չէ գործադրուած:

Բայց պ. Դաղբաշեան այլապէս է վարում. նա մեր բերած օրինակներից մէկը կամ երկուսը իրենավարի «հարքելով»՝ հերքած է համարում և ամբողջ սկզբունքը: Օրինակ, մանք իբրեւ սկզբունք ասել էինք, թէ Ակադեմիական բառարանում եղած բոլոր բառերը չը պէտք է ղետեղուէին պ. Դաղբաշեանի բառարանում. պէտք էր դուրս ձգել ինչ որ բոլորովին հնացած է, ինչ որ մի յետ ընկած գաւառում գործածական է, և այլն: Իբրեւ օրինակ այսպիսի աւելորդ ղետեղուած բառերի՝ բերել էինք браница, гоить, гуня, варовина (4-րդ նշանակութիւնը), барабанная шкура, богатство (երրորդ նշանակութիւնը): Պ. Դաղբաշեանը մեր բերած 6 օրինակից միայն մէկն է պաշտպանում—«барабанная шкура»՝ հայհոյական դարձուածքը—և դրանով հերքում է մեր սկզբունքն՝ ասելով «բազմաթիւ հնացած բառեր ու գաւառաբանութիւններ չը կան մեր բառարանում»:

Մենք իբրեւ պակասութիւն նկատել ենք պ. Դաղբաշեանի բառարանում՝ թարգմանական բառերի կուտակումը մի թարգմանելի բառի դէմ, ցոյց էինք տուել այդ պակասութեան վնասները և «հարիւրներից» բերել էինք իբրեւ օրինակ всеславный, веревка, беременная, ажурный, бойкий, гнусный,

заглохнуть բառերի կազմութիւնը: Պ. Դաղբաշեանը ի նկատ է առնում այս բառից միայն երկուսը, «հեքքում է»—և մեր ամբողջ նկատողութիւնը դրանով ոչնչացնում: Կարծում ենք պարզ է, որ այս կերպով չեն հեքքում հակառակորդին:

Լաւ չէ վարում պ. Դաղբաշեանը և նրանով, որ բանական մէջ գիմում է յեղաշրջումների: Բերենք մի-երկու օրինակ: Պաշտպանելով իւր գործ դրած՝ ռուսերէն բառերի կրթնաւ գրելու սխառմը և յայտնելով, որ այդ արել է միմիայն տեղ խնայելու համար, «ամենեւին ուշադրութիւն չը դարձնելով բառի լեզուաբանական և քերականական կողմերի վրայ», նա աւելացնում է. «Յամենայն գէպս պ. Ստ. Մալխասեանի առաջարկութիւնը այլ կերպ վերոյիշեալ բառերը բաժանելու, այն է. добав||а, добав||ление... կոպիտ սխալ է սողադարձութեան կանոնների գէմ, (см. Гротъ, Правописание, стр. 98, изд. 13-ое)»: Այնպէս է գուրադարիս, որ մենք ղեռ ծանօթ չենք սողադարձի կանոններին և այս տեսակետից կոպիտ սխալ ենք առնում, որին իբրեւ ապացոյց՝ մեզ գէմ է անում պ. Դաղբաշեանը Գրօտի Ուղղագրութեան ձեռնարկը և երեսը: Այն-ինչ հէնց նոյն Գրօտի ձեռնարկը ղեռ 10 տարի առաջ մենք յիշել ենք մեր «Գրարարի համաձայնութիւնը» դասադրքում, իբրեւ մինը այն աղբիւրներից, որոնց հետեւել ենք արոնութեան և առողանութեան կանոնները կազմելիս («Գրար. համաձ.» եր. 174, ծանօթ.):

Պ. Դաղբաշեանի այս վարմունքը բացատրելու համար բերենք մեր դրախտութիւնից մի քանի տող. «Անհասկանալի է մնում, թէ ինչ սխառմով է բառը անջատոււմ երկու մասերի. ոչ միևնոյն խմբի բառերի մէջ անսովորիս կրկնուող անդամն է անջատուած, և ոչ բառի լեզուաբանական արմատը... Օր. ինչո՞ւ վերը բերուած բառը բաժանուած է до||бава հայլն, և ոչ թէ добав||а, добав||ление... կամ զոնէ доба||ва, доба||вление: Ի՞նչ խորհուրդ կար բաժանել би||нтикъ... և ոչ бинт||икъ... (կամ զոնէ бинт||тикъ)»: Ուրեմն մեր խօսքը սխառմի բացակայութեան մասին է բառերի մասերը բաժանելու մէջ և ոչ թէ սողադարձի: Քանի որ տեղ խնայելու համար է այս կրճատումը, ինչպէս ասում է ինքը պ. Դաղբաշեանը, ինչպէս նկատել էինք և մենք, և քանի որ «ամենեւին ուշադրութիւն չէ դարձուած բառի լեզուաբանական և քերականական կողմերի վրայ», ինչպէս խոստովանում է պ. Դաղբաշեանը, ինչպէս նկատել էինք և մենք—սպաւ բնական էր սպասել добав||а, бинт||икъ բաժանումը, որով տեղի աւելի խնայողութիւն կը լինէր: Այս կրճատումը, որ մենք առաջարկել էինք (добав||а, бинт||икъ), ունէր

բացի դրանից և մի ուրիշ լատութիւն—դրանով այդ բառերի լեզուաբանական արմատն է բաժանուում, այսինքն նրա մէջ կայ որեւէ սխառութիւն: Բայց որպէսզի այդ բաժանումը տողադարձի տեսակէտից խորթ չը թւար՝ ամենք զրել էինք և ուրիշ բաժանում՝ համաձայն տողադարձի կանոններին—զրել էինք՝ «կամ գոնէ доба||ва, доба||вление... կամ գոնէ бин||тикъ»: Ահա այս երկրորդ, տողադարձի կանոնով մեր արած բաժանումը պ. Դադբաշեանը մէջ չէ բերել, որպէսզի ընթերցողներին մոլորութեան մէջ ձգէ, իբր թէ մենք տողադարձի կանոններին անգամ անձանօթ ենք:—(Տողադարձի կանոնները այդքան պաշտպանող պ. Դադբաշեանին յիշեցնելու ենք մեր կողմից, որ ինքը տողադարձի կոպիտ սխալ է արել՝ бин||тикъ, бин||тование... բաժանելով, և ստիպուած ենք նորան յոյց տալ նոյն Գրօտի ուղղագրութեան նոյն 98 երեսը (8-րդ տպագրութեան), 5-րդ յօդուածը, որտեղ աւանդուած է երկու բաղաձայններ անշատիւ կանոնը և բերուած է вин—ты, —ապա ուրեմն бин||тикъ):

Մի ուրիշ օրինակ: Մենք նկատել էինք, որ պ. Դադբաշեանի բառարանում գործ են ածուած օտարոտի և անհասկանալի բառեր, և բերել էինք մի քանի նմուշներ: Պ. Դադբաշեան այս առիթով գրում է. «պ. Ստ. Մալխ. մեր բառարանում օտարոտի և անհասկանալի բառեր ևս գտել է: Դոքա են արանքոհնակ, արանքոհնակաւոր, հեց, քաղցրիտ, արեթենի, ծո(յ)լ, յամրուկ»: Այնուհետև պաշտպանելով արանքոհնակ բառը, իբրև Ղազարի գաւառում գործածուող բառ՝ բացառանչում է միւսների մասին. «Եւ ինչ մեղաւոր եմ, որ պ. Ստ. Մալխասեանին հեց, ոգորենի, արեթենի, ծո(յ)լ, յամրուկ, քաղցրիտ դրական և յաճախ գործածական բառերը անհասկանալի են»:

Մի շատ տղեղ խաղ է խաղացել այստեղ պ. Դադբաշեանը՝ իրան արգարացնելու և մեզ գարձեալ իբրև տղէտ ներկայացնելու համար: Բանն այն է, որ բացի արանքոհնակ, արանքոհնակաւոր և հեց բառերից միւս օրինակները պ. Դադբաշեանը չէ ներկայացրել այնպէս՝ ինչպէս որ կան իր բառարանում և ինչպէս որ մենք էլ բերել էինք. այլ ուղղել է, մեղմացրել է սուս ու փոս, և արդէն ուղղուած ձևերը բերում է՝ իրան արգարացնելու և մեզ յանդիմանելու համար, առանց մի բառով զգուշացնելու ընթերցողին իր արած փոփոխութեան մասին: Այսպէս՝ նրա բառարանում տպուած է և մենք բերել էինք՝ «յամրուակը».—իսկ պ. Դադբաշեանը ներկայացնում է այդ բառը «յամրուկ» ձևով.—մենք բերել էինք «ծոլ».—պ. Դադբաշեանը գրատել է «ծո(յ)լ». մենք բերել էինք «քաղցրիտ օշանակ».—պ. Դադբաշեանը յիշել է միայն «քաղցրիտ».—մենք բերել էինք «ողորե-

նու աբեթենի».—պ. Դաղբաշեանը բերել է «ոգորենի, աբեթենի»: Դուրս է գալիս, որ բառարանից մեր բերած բառերը «ծով, յամրուակը, քաղցրիտ օշանակ, ողորենու աբեթենի» յիրաւի անհասկանալի են բոլոր հայ մարդկանց համար, որովհետեւ դրանք գոյութիւն չունին, բայց և այնպէս պ. Դաղբաշեանի մի ձեռնածութեամբ մենք ենք մեղաւոր դուրս գալիս, որ գրական և յաճախ գործածական (?) բառեր չենք հասկանում:

Բայց ինչն էր ստիպում պ. Դաղբաշեանին գիմել այս տգեղ միջոցին, քանի որ նա կարող էր հեշտ միջոցով ազատուել՝ յայտարարելով թէ «յամրուակը, ծով, ողորենի» ձևերը տառասխալների հետեանք են:—Մի շատ հետաքրքրական հանգամանք, որ արժէ ընթերցողներին հաղորդել. «ոգորենի» ձևը պ. Դաղբաշեանը չէր կարող յայտարարել տառասխալ, որովհետեւ ինն անգամ գործ է ածել միմեանց յետեից (եր. 51ա). իսկ այդ ողորենի բառը հնարել է ինքը պ. Դաղբաշեանը, և հնարել է՝ ոգորենի բառից, սրա միջի զ գիրը սխալմամբ ղ կարգացած լինելով:—Տգիտութեան այս խայտառակութիւնը պարտակելու համար պ. Դաղբաշեանը ընտրել է վերոյիշեալ միջոցը:

Լաւ չէ վարւում պ. Դաղբաշեանը և նրանով, որ այլայլւում է մեր ասածները և մեզ բռնի կերպով վերագրում է այնպիսի հայեացքներ և մտքեր, որ մենք չունինք և որոնց գէմ, ընդհակառակն, հէնց մենք կուուումենք: Դարձեալ բաւականանալք երկու օրինակով:

Պ. Դաղբաշեանը սեղ կոչում է «գաեհկաբանութեան ոխերիմ թշնամի», բռնում է մեզ հակասութեան մէջ, որ գործ ենք ածել «ուսղ անար» դարձուածքը, հեգնելով կոչում է մեզ գրաբարագէտ և այնուհետեւ ասում է. «Թող չը դարհուրի պ. Ստ. Մ. այգպիսի բառերից: Ռամկական, ժողովրդական և գաւառական բառեր գործ են ածում մեր բոլոր գրողներն և թարգմանիչները»: Այսպէս է մեզ ներկայացնում ընթերցողներին պ. Դաղբաշեանը: Բայց ահա մենք ինչ հայեացքներ ենք յայտնել մեր դրախտասութեան մէջ: «Պ. Դաղբաշեանը ի չարն է գործ դնում գրաբար և նոր չինուած բառերը, գրաբար ձեւեր կայն, որոնցից կարելի էր շատ անգամ խոյս տալ»... «Պ. Դաղբաշեանը կամեցել է կենդանի ժողովրդական լեզուից բառեր վերցնել իր բառարանի համար: Միտքը գովելի է»... «Պ. Դաղբաշեանը ծայրայեղութիւնների մէջ է ընկնում՝ աւելորդ տեղը գրաբար բառերի եւ դարձուածքների հետ գործածելով գոեհկաբանութիւններ և օտար բառեր» (եր. 196): Մենք դատապարտել ենք դրաբար բառերի և դարձուածքների անտեղի գործածութիւնը այժմեան մեր գրական լեզուի մէջ (և այս մասին բոլորովին

լուել է պ. Դաղբաշեանը)։ Կատապարտել ենք և գործածութիւնը «այնպիսի գոհնիկ և օտար բառերի, որոնց չէ կարող գիմանալ նուրբ ճաշակը, և այն՝ երբ ամենեին հարկ չը կայ այդպիսի ծալ-րայեղ միջոցի գիմելու»։ Կենդանի ժողովրդական լեզուից բա-ռեր վերցնելու միտքը գովել ենք ակզբունքով, բայց պախարա-կել ենք պ. Դաղբաշեանի անճաշակութիւնը և լեզուաբանական հոտառութիւնից զուրկ լինելը, որ չէ կարողացել որոշել, թէ ինչ բառ կարելի և հարկաւոր է վերցնել և ինչ բառ չէ կարելի։ Ահա այս մեր միտքը պ. Դաղբաշեանը այլայլել է վերոյիշեալ կերպով և մեզ բոլորովին ուրիշ հալեացքի և ճաշակի տէր է ներկայացրել ընթերցողներին։

Պ. Դաղբաշեանը յայտնում է, իբր թէ Նորայր Բիւզան-դացին և Հայր Քաջունին իբրեւ բառարանագիրքներ՝ անսխալա-կան են մեզ համար։ Այդպիսի բան մենք ոչ ասել ենք, և ոչ մտքերովս անցել է։ Նորայրի բառարանի մասին սենք առիթ չենք ունեցել կարծիք յայտնելու. բայց պ. Ար. Յովաննիսեանի բառարանը քննելիս՝ մենք անցողակի կերպով մի-երկու նկա-տողութիւն ենք արել Նորայրի պակասութիւնների մասին, և պ. Դաղբաշեանը, որ այնքան լաւ ուսումնասիրել է մեր այդ քննութիւնը, չէր կարող չը նկատել, որ Նորայրի բառարանը անսխալական չէ մեր աչքում։ Իսկ հ. Քաջունու բառա-րանի մասին ունինք զրաժ համառօտ քննութիւն («Արձա-դանք» 1891, №-ը չենք յիշում)։ Այնտեղ պ. Դաղբաշեանը կը տեսնէ, որ հ. Քաջունու բառարանն էլ անսխալական համարե-լուց մենք չառ հետու ենք։ Մենք այս երկու հեղինակները յի-շեցրել էինք պ. Դաղբաշեանին՝ իբրեւ քարեխղճութեան օրի-նակ (որ ընդունում է և՛ պ. Դաղբաշեանը՝ Նորայրի բառարա-նը կոչելով «անպայման բարեխիղճ, լուրջ, գնահատելի բառա-րան»)։ Իսկ որ նրանք ունին չառ պակասութիւններ և չառ սխա-լական են, այդ մենք գիտենք և աւելի լաւ, քան պ. Դաղբա-շեանը։ Վերադրել մէկին մի միտք կամ կարծիք, որպիսին այդ անձը ոչ յայտնել է և ոչ ունի, աններելի վարմունք է։

Դառնանք այժմ պ. Դաղբաշեանի հերքումները մի առ մի քննելու։

Բոլոր նրա հերքումները մէջ օրինաւոր են հետեւեալները.— պ. Դաղբաշեանը ապացուցել է, որ «գեղջ», «հրահանք» սովա-րանական սխալներ են բառարանում և ոչ թէ ստառասխալներ, ինչպէս մենք ենթադրել էինք. ապացուցել է, որ «գերեզմանոց» գրութիւնը օրինաւոր է (թէպէտ դարձեալ նախընտրելի է գե-րեզմանոց ուղղագրութիւնը)։ Բացի արանից՝ հաւատում ենք պ. Դաղբաշեանին, որ «կտրիճ ատամ», «պղպճակ» և «յարդում»

(=հարթում) ձևերը տպարանական սխալներ են, թէպէտ «ինքր անկարող է ապացուցանել»։—Նրա բոլոր մնացած փաստաբանութիւնները անհիմն են և սխալ։

«Барабанная шкура» «ռուս գրական լեզուի մէջ խիստ գործածական դարձուածք» չէ. նա է և մնում է դարձեալ գաւառաբանութիւն, չը նայելով որ «Воскресенье» վէպի մէջ գործ է ածուած (գոնհիկ կնոջ բերանում)։ Պ. Դաղբաշեանի թարգմանութիւնը—«փուշ, յիմար կին», եթէ ճիշտ էլ լինէր,*) այնուամենայնիւ կը լինէր նրա փոխաբերական, անկենդան նըշանակութիւնը. մինչդեռ բառացի նշանակութիւնը «թմբուկի կաշի», ինչպէս թարգմանել է Տ. Յովհաննիսեան, աւելի պատկերաւոր և ուժեղ է, և ամեն մի կարդացող կը հասկանայ, որ «թմբուկի կաշին» իբրև անարգական խօսք է գործ ածուած։ Վերջապէս սխալում է պ. Դաղբաշեան, թէ հայերէն «թմբուկի կաշի» հայհոյանք չը կայ։ Արարատեան նաճանգում գործ են ածում հայհոյական մտքով «գհուկի կաշի»։

Պ. Դաղբաշեանը ընդունել է, որ բառերի կրճատումն աւրել է՝ «ամենեկին ուշադրութիւն չը դարձնելով բառի լեզուաբանական և քերականական կողմերի վրայ»։ Եւ եթէ սրա վրայ աւելացնենք այն անուրանալի երևոյթը, որ «տեղ խնայելու» նպատակին էլ խելացի կերպով չէ ծառայեցրել նա այս կրճատումը, ապա բառացի դուրս կը գայ այն, ինչ որ մենք ասել էինք այս մասին մեր գրախօսութեան մէջ։—Իսկ որ կրճատումը շատ զփուարացնում է բառ փնտռելը, սա ապացոյցների կարօտ չէ։

Акклиматизация, Амфора բառերի մասին պ. Դաղբաշեանը զուր է ճիգ թափում և մի սխալից միւս սխալի մէջ ընկնում։ Փոխանակ դիմելու Մէյէրի Հանրագիտական բառարանին (որ լեզուագիտական-մասնագիտական չէ) և Գրօտի Ուղղագրութեան (որի մէջ մեր ունեցած օրինակում Акклиматизация բառի ծագումը նշանակուած չէ), աւելի լաւ կը լինէր՝ պ. Դաղբաշեանը դիմէր հէնց նոյն Գրօտի Ակադեմիական բառարանին, որտեղ գրուած է շատ ճիշտ կերպով «Амфора (лат. отъ греческаго amphoreus), Акклиматизация (нѣм. отъ греческаго klima)»։ Իսկ որ պ. Դաղբաշեանը կարծում է, թէ բառի ծագումը իւր բառարանում նշանակուած է համաձայն նրա «պատմական ծագման», նայելով թէ որ ազգից են վերցրել ուղաները այս կամ այն բառը՝ այդ սխալ է և յոյց է տա-

*) Ակադեմիական բառարանում գրուած է «пустая, вздорная женщина», որ չէ նշանակում «փուշ՝ յիմար կին»։

լիս, որ պ. Դաղբաշեանը ինքն էլ չէ հասկանում, թէ ինչ է անում իւր բառարանում: Այսպէս՝ նա նշանակել է Аллилуйя՝ երբայեցեղէն, Аллопатія՝ յունարէն. մինչդեռ աշխարհին էլ յայտնի է, որ առաջին բառը ուսմանն առել են ոչ թէ երբայեցեղէնից, այլ յունարէնից, իսկ երկրորդը ոչ թէ յոյներից (որոնց բառարաններում այս բառը չը կաւ իսկի), այլ եւրոպական նոր ազգերից, որոնք այս բառը ինչպէս և շատ հարիւրաւոր բառեր իրանք են կազմել յունական արմատներից:

Գալով պ. Դաղբաշեանի յայտարարութեան, թէ մենք չաբաշար սխալում ենք՝ սխալ համարելով յանկ, գրէթէ, ամէնաւարող, ցատկիլ, սայթքումն և այլն ձևերը՝ պէտք է ասենք, որ պ. Դաղբաշեանը կատարեալ իրաւունք ունի այսպէս մեզ խայտառակելու՝ քանի որ հայերէնի ուղղագրութեան մէջ տիրող դիտական հիմքերն են՝ ագիտութիւնը և յանդիմութիւնը: Նրա քէֆն ուզել է այսպէս գրել—և այսպէս գրել է, ո՞վ է նրա ձեռքը բռնողը. եթէ մէկը նկատէ, որ սա սխալ է, իսկոյն մի ամանով ցեխ կ'ածէ նրա գլխին, և պրծաւ: Մենք զարմանում ենք, ինչո՞ւ պ. Դաղբաշեանը նոյն մէթոդով չէ վարուել նաև «զեղջ», «խոչնդոտ» և այլ բառերի վերաբերութեամբ. չէ որ դրանք էլ «անխտիր» գրւում են թէ՛ այդ ձևով և թէ՛ «զեղչ», «խոչնդոտ» ձևով:—Ուրիշ կերպ կը լինէր բանը, եթէ պ. Դաղբաշեանը ծանօթ լինէր հայերէնի հնչիւնական օրէնքներին և հասկանար, թէ ինչ ասել է «ընդունուած ուղղագրական ձև». այն ժամանակ կը տեսնէր, որ ինքն է չաբաշար սխալուողը, իսկ մենք շատ իրաւացի ենք արել մեր նկատողութիւնը: Որովհետև թէ՛ հնչիւնական օրէնքով և թէ՛ ընդունուած ուղղագրական ձևով՝ ճիշտ ձևերն են գրեթէ, ամենակարող. ընդունուած ուղղագրական ձևերն են՝ յանգ, ցատկել, սայթաքուն:—Մեզ վրայ պ. Դաղբաշեան պարտք է գնում բացատրել, թէ «ինչո՞ւ պէտք է գրել խորհրդակցիլ, աշխատիլ, բայց ցատկել, ընկնել»: Մենք չենք առաջարկել առաջին երկու ձևերը (թէպէտ նրանք կանոնաւոր կը լինէին միջնադարեան դարբարի ուղղագրութեամբ, ինչպէս և ընկնիլ ձևը). մենք առաջարկել ենք գրել՝ քծնել, լինել, ընկնել, նոյնպէս կ'առաջարկէինք գրել՝ խորհրդակցել, աշխատել և այլն. այսինքն բոլոր երկրորդ (ևս) և երրորդ (իմ) լծորդութեան բայերի անորոշ դերբայները գրել՝ «ել» վերջաւորութեամբ: Պատճառը բացատրել չառ երկար կը լինէր. (պ. Դաղբաշեանին հարկաւոր կը լինէր ծանօթացնել երրորդ լծորդութեան դարաւոր պատմութեան հետ, որ այստեղ անկարելի է). բառականանաք առաջարկելով պ. Դաղբաշեանին, որ քծն(ու)իլ, լինիլ, ընկնիլ ձևերը հոլովէ.—այն

ժամանակ դրանց «և» գիրը ինքն էլ կը տեսնէ (քծնելու, լինելուց, ընկնելով և այլն)։

Պ. Դաղբաշեանը գրում է «աւիլ», «սանդուխտ», «որովհետեւ այս բառերը կենդանի ժողովրդի (ուրեմն լինում են և մեռած ժողովուրդներ) բերանում այսպէս են հնչում, և այս ոչ պ. Ստ. Մալխասեան և ոչ էլ մի ուրիշ ոք կարող է հերքել»։ Ինչու հերքենք այս բանը, քանի որ ինքներս էլ ասել ենք, որ պ. Դաղբաշեանը համընկնների նման սխալուել ու գրել է սանդուխտ։ Ընդհակառակը, մենք խորհուրդ կը տայինք պ. Դաղբաշեանին գրել նաև՝ «ծանտր», «մե՛նծ», «հօքի», «թաքւոր» կամ «թքեաւը», որովհետեւ ժողովրդի բերանում այդպէս են հնչում։ — Ցաւալի է արդարեւ պ. Դաղբաշեանի հերքելու եղանակը. — նա ոչ թէ նպատակ ունի ապացուցանել իւր կարծիքի ճշմարտութիւնը, այլ մի կերպ գլուխը պրծցնել. մի տեղ՝ Առձեռն բառարանն է նրա նեցուկը, երբ սա է ձեռք տալիս, ուրիշ տեղ՝ ժողովրդի արտասանութիւնը, երբ Առձեռն բառարանը օգնութեան կանչել է լինում։ Այսպէս վարուելով՝ ամեն մի սխալ ձև կարելի է օրինաւորել. բայց այսպիսի վարմունքին ասում են յամառ սովեստութիւն։

Այսպիսի սովեստութիւն է անում պ. Դաղբաշեանը և «ծննդական» բառի վերաբերութեամբ. նա դիմում է Առձեռն բառարանի օգնութեան, որպէսզի ցոյց տայ, թէ այդ բառը նշանակում է նաև՝ «որ պիտի ծնանի», և այս հօգոր վկայութեամբ զինուած՝ յայտարարում է մինչև իսկ, որ մենք ենք սխալուել կարծելով, թէ ծննդկան միայն ծնած, այսինքն ազատուած, երեսպ ընրած կին է նշանակում։ — Թէ «ծննդական» բառը ինչ է նշանակում գրաբարում՝ այդ մենք չատ լաւ գիտենք առանց կարօտութիւն ունենալու պ. Դաղբաշեանի և Առձեռն բառարանի օգնութեան։ Բայց պ. Դաղբաշեանը կարօտութիւն ունի իմանալու երկու ճշմարտութիւն. առաջին՝ որ նա կազմում է բառարանի ուսերէնից աշխարհաբար հայերէն, և երկրորդ՝ որ հարիւրաւոր բառեր կան, որոնք գոյութիւն ունին գրաբարում էլ, աշխարհաբարում էլ, բայց տարբեր նշանակութեամբ։ Այս երկու ճշմարտութիւնների հիման վրայ՝ ծննդկան (և ոչ գրաբար ծննդական) բառը նշանակում է՝ նոր ծնած կին — այս է այս բառի նշանակութիւնը այժմեան գրական լեզուում և գաւառաբարբառներում. — ուստի և նա իրաւունք չ'ունէր այս բառը դնել ուսերէն օտար բառի դէմ, որ նշանակում է լոկ՝ յղի կին։

«Յղիութիւն, յղիանալ» ձևերը «նորաձեւութիւն» են. այս խոստովանում է պ. Դաղբաշեանը։ Այսպէս էլ գիտենանք։

«Արանքոհնակ» բառը, որը պ. Դադբաշեանը գործ է ածել «անճարացած»՝ բառական չէ որ զուտ թուրքերէն բարդ բառ է, (որ նշանակում է դաշտի չապիկ)։ բառական չէ, որ балахонъ բառի ճիշտ նշանակութիւնը չէ տալիս, (որովհետեւ балахонъ ընդհանրապէս վերնազգեստ է առանձին տարազի, և ոչ թէ լոկ աշխատանքի ժամանակ հագնելու չապիկ)։ բառական չէ որ Ղադախի դաւառում էլ չատերին ծանօթ չէ (մեր հարցրած մարդկանցից երեքը ամենեկին չը գիտէին, մէկը գիտէր՝ արաքոհնակ ձևով),—նա չէ դրուած նոյն-իսկ չակերտների մէջ, ինչպէս պ. Դադբաշեանը պայմանաւորուել էր վարուել գաւառական բառերի հետ։—«Խնջոյք տալ», «խնջոյք սարքել» օտարոտի են, որովհետեւ մի բաժակ թէյով էլ, մի-երկու ֆունտ մրդով էլ կարելի է ջուրը քաշել (օր. նոր զգեստի, պաշտօնի, առհասարակ ուրախութիւն մի բանի)։ արդ մի բաժակ թէյը կամ մի քիչ միւրդ տալը «խնջոյք տալ» կոչելու համար հարկաւոր է առնուազն պ. Դադբաշեանի հայր յանդուգն լինել։ «Մաղարիչ առնելը» անպայման տղեղ է, որի փոխարէն լաւ կը լինէր պ. Դադբաշեան գիտենար և գործ ածէր դաւառական «ջուրը քաշել», «ջուրը վրադ» դարձուածքը։ Ինչո՞ւ համար նրա բառարանի զործածողը պէտք է իմանայ Ղադախի մի փոքրիկ անկիւնում գործ ածուող արանքոհնակ թուրքերէն բառը (և դրանից պ. Դադբաշեանի ձեռքով թխուած արանքոհնակաւոր բառը), իսկ ըստարանագիր պ. Դադբաշեանը չը պէտք է իմանայ «ջուրը քաշել», «ջուրը վրադ է» հայերէն գաւառական դարձուածքը, որ գործ է ածուում Ախալցխայի, Ախալքալաքի, Նոր-Քայազետի, մասամբ Աղէքսանդրապոլի գաւառներում, նոյնպէս և Տաճկահայաստանի մեծ մասում։

«Հեց» բառը այժմեան կենդանի լեզւում, ոչ գրականում և ոչ դաւառականներում, չէ գործածուում. ուստի պ. Դադբաշեանի բառարանը գործածողների ամենամեծ մասի համար մնում է անհասկանալի, ինչպէս և ասել ենք մենք։ Եթէ սակայն պէտք էր այդ մեռած բառին յարութիւն տալ՝ ապա պէտք էր գործածել նրա ընտրելագոյն ձևը «խեց», ինչպէս գրում է Եզնիկը։ Յամենայն դէպս ընտրելի էր գործ ածել «անուի չրջանակ» հասկանալի բառը, կամ համանիշ մի դաւառական բառ։ (Այս նոյն բառը դուգայի նշանակութեամբ գործ է ածուած պ. Դադբաշեանի բառարանում և եր. 147 բ. «հեց կամ դուգա քաշելու համար»։ Գուցէ այստեղ այս երկու բառերը տարբեր առարկաների համար են գործ ածուած—չենք վեճում)։

Երեք գոհակարանութիւնները պ. Դադբաշեանը գործ է ածել բառարանի 84 երեսում, (մեր յօդուածում սխալմամբ

սուլուած էր 1841, որից ալ. Դաղբաշեան խորիմաստ եզրակացութիւն է անում): Մենք ոչ «զարհուրում ենք ժողովրդական և ռամկական բառերից» և ոչ խորշում ենք օտար լեզուի բառերից, ինչպէս առիթ էլ ունեցել ենք գրելու: Մենք պահանջում ենք, որ գոնակարանութիւն և օտարաբանութիւն չը դործածուեն այնտեղ՝ ուր, հարկ չը կայ: Այսպէս, աւելորդ դործածուած գոնակարանութիւններ են «քօյու երկարութեամբ», «քօթակ», «քօթակեր», «զարմաղալ» բարձրացնել, որոնք եթէ չը լինէին, բառարանը կը շահուէր, և ոչ թէ կը վնասուէր: Հէնց նոյն 84-րդ երեսում պատահում են «թրխկալ, դրմիալ, չրխկալ, ծուռտիկ, բառանչել, հարու տալ, վեռնատ» գաւառաբանութիւնները, «բուկեֆալ, պարուսինեայ, կադետ, կաֆտան, բուխնալտէր» օտարաբանութիւնները, որոնց մասին նկատողութիւն չէինք արել. նշանակում է՝ ընդունում էինք այդ գաւառական և օտարազգի բառերի դործածութեան օրինաւորութիւնը. իսկ այն երեքը անձաշակ և անտեղի են, և բառարան կազմողը պէտք է ունենայ շատ թէ քիչ ճաշակ՝ ընտրութիւն անելու:

«Թասկօր» բառի դործածութիւնը պաշտպանելով (փոխանակ հերձուած բառի)՝ ալ. Դաղբաշեանը մի քանի հետաքրքրական ճշմարտութիւններ է յայտնում: Օրինակ՝ որ «սովորական հերձուածոյնները լոկ կրօնական միութիւններ են եղել, կրօնական ձգտումներով. քորորովին ուրիշ, սոցիալական ձգտումներ ունի ուսւ եկեղեցու ռասկօրը»: Չնայելով որ ալ. Դաղբաշեանը կարծում է, որ մենք «թիւր հասկացողութիւն ունինք ուսւ եկեղեցու ռասկօրի մասին», համարձակում ենք այնու ամենայնիւ նրան յայտնել, որ ուսւ հերձուածոյնների այդ «քորորովին ուրիշ, սոցիալական ձգտումները» ոչ այլ ինչ են՝ եթէ ոչ սովորական հերձուածոյնների բուն «կրօնական ձգտումները» էվօլյուցիայի ենթարկուած, և նրանց ամեն մի «սոցիալական տարբեր ձգտումը» առաջ է գալիս նրանց կրօնական համոզումից:

Նոյնպէս «կատարեալ մոլորութիւն» է կոչում նա մեր խօսքը, թէ հերձուած բառը պատմական նշանակութեամբ ճիշտ համապատասխանում է расколъ բառին (ալ. աստուածաբանը մի անգամ էլ Մովսէս Սորենացուն բռնեց հերիախկասութեան մէջ՝ նրա ասածը չը հասկանալով): Մենք ասել ենք, որ հերձուած բառը թէ ծագումով և թէ պատմական նշանակութեամբ ճիշտ համապատասխանում է расколъ-ին, որովհետեւ ծագումով՝ թէ հերձուած և թէ расколъ բառացի նշանակում են ճեղքուածք, ճեղքումն, իսկ պատմական նշանակութեամբ՝ որովհետեւ թէ հայերէն հերձուածք և թէ ռուսերէն расколъ-ը նշանակում եղ այն մարդկային խումբը, որ մայր եկեղեցուց անջատուելով՝ ա-

ոանձին եկեղեցի է կազմում: Եկեղեցական պատմութեան ըր ղասագրքում կամ ըր մասնագիտական գրքում պ. Դաղբաշեանը գտել է ցուցում, թէ հերձուածը առ առաւելն այսքան հոգուց պէտք է բաղկանայ և ոչ աւելի: Արդեօք բողոքական եկեղեցիները, որ ոչ միայն 13 միլիօն, այլ տասնապատիկ էլ աւելի հետևողներ ունին, հերձուած չեն ներկայացնում կաթողիկ եկեղեցու տեսակէտից և նրա վերաբերմամբ:

„Всемогуственный“ և «всемогущий» բառերի նշանակութիւնների մասին էլ վիճում է պ. Դաղբաշեան, կամենալով զլիսովը պատը կոտրել: Մենք այդ բառերի մասին գրելիս Ակադեմիական բառարանը նայելու կարիք չէինք զգացել: Շատ ուրախ ենք, որ այդ բառարանն էլ բերած վկայութիւններով հաստատում է մեր ասածը, թէ առաջին բառը կարելի է դործածել և՛ մարդկանց համար, իսկ երկրորդը միայն Աստուծո համար: Գրութիւնից բերուած օրինակը, որտեղ всемогущий բառը գործ է ածուած Նապօլէօնի համար, միակը չէ. կարելի է դեռ ուրիշ շատ օրինակներ բերել, որտեղ այդ բառը գործ է ածուած և՛ մարդկանց, և նոյն-իսկ անշունչ իրերի համար (օր. всемогущество денег): Բայց զրանք այդ բառի փոխաբերական կամ չափազանցական առումներն են, որոնք պէտք է զանազանել նրա բուն, բառազմեական նշանակութիւնից: Իսկ որ всемогуственный բառի դէմ Ակադեմիական բառարանում դրուած է всеисильный, всемогущий, որով կարծես թէ այդ երկու բառը նշանակութեամբ հաւասարեցրած են միմեանց, զաչը պէտք է խաբէր պ. Դաղբաշեանին: Թուներէնից ռուներէն բառարանի մէջ (որտեղ թէ թարգմանելի բառը և թէ թարգմանութիւնը ռուներէն է), անխուսափելի է բառը իւր հոմանիշներով բացատրելը, ինչպէս հայերէնից հայերէն և այլ այսպիսի բառարաններում միշտ տեղի ունի: Հմուտ բառարան գործածողը նայում է այս գէպերում ոչ թէ բառի բացատրութեան, որ կարող է չը լինել բոլորովին ճիշտ, այլ օրինակներին:

«Раздѣльный актъ имѣнію» խօսքի թարգմանութիւնը, որ մենք իրաւացի կոչել էինք «ծայրէ ծայր սխալ և բազմաթիւ թիւրիմացութիւնների տեղիք տուող բացատրութիւն», պ. Դաղբաշեանը պաշտպանում է նրանով, որ աչքի առաջ է ունեցել Տուրգենովի «Степной Король Лиръ» գրուածքը: Ուրիշ խօսքով ասելով՝ պ. Դաղբաշեանը իրաւաբանական բառերի բացատրութիւնը որոնում է քանաստեղծական գրուածքների, վէպերի մէջ, փոխանակ օրէնքների ժողովածուի, օրէնքների մեկնութիւնների և իրաւաբանական բառերի մասնագիտական

բառարանների մէջ որոնելու։ Այսպիսի մէթոդի հետեանքը անշուշտ իրանց կաշու վրայ կը փորձեն պ. Դաղբաշեանի բառարանը գործածողները, եթէ միամտութեամբ հաւատան նորան։ — Հարկը անգամ լաւ չէր պարզապէս խոստովանել իւր սխալը, քան այնպիսի պաշտպանութիւն բերել, որ միանգամայն վարկազուրկ է անում թէ բառարանը և թէ նրա յօրինողին*)։

„Variация“ բառի թարգմանութիւնը մենք կոչել էինք խոչոր սխալ, և այս պատճառով բծախնդիր ենք յայտարարուել պ. Դաղբաշեանից։ Մենք ասել էինք, որ «հեղինակը երկի մինչև այժմ էլ ոչինչ հասկացողութիւն չունի, թէ ինչ է նշանակում երաժշտութեան մէջ վարիացիան»։ և մեր խօսքը ապացուցանում է պ. Դաղբաշեանը իր պատասխանով։ Այս բաւական չէ. դուրս է դալիս, որ լիակատար բառարան կազմող մարդը «այժմ ևս չէ հասկանում, թէ ինչ տարբերութիւն կայ «փոխխոսութիւն» և «զարգարուն զանազանակերպութիւն» բացատրութիւնների մէջ»։ Շատ ափսոս։ Բացատրել այս երկու բառերի տարբերութիւնը մեզ հետեւ կը տանէր. այսքան միայն ասենք, որ փոփոխութեան ուսերէն ասում են измѣненіе, перемѣна, իսկ զանազանակերպութեան՝ разнообразіе։ Գուցէ ուսերէն բառարաններն օգնեն պ. Դաղբաշեանին հասկանալ այս բառերի տարբերութիւնը *)։

Շատ չարացւոյ է պ. Դաղբաշեան, որ մենք իրան առաջարկել ենք՝ հէնց իր բառարանի բառերով թարգմանել сербьянный ажурный подсвѣчник՝ խօսքը—և մի «կոկլիկ» թարգմանութիւն է արել—«արծաթէ աշտանակ ջանցակերպ դրուագով (կամ նաշխով)։ Այս թարգմանութիւնից երևում է նախ, որ նրա բառարանում դրուած հինգ թարգմանական բառը զեռ պակասաւոր են եղել ажурный բառը թարգմանի-

*) Բայց Տուրգենևից բերած վկայութեան վերաբերմամբ էլ պ. Դաղբաշեանը ընկել է մի խայտառակութեան մէջ.—նա չէ հասկացել բանի էությունը։ „Раздѣльный актъ имѣнію“ դարձուածքը պ. Դաղբաշեանի թարգմանած նշանակութեամբ գործ է ածել ոչ թէ պատմող հեղինակը, այլ նրա հերոսը, Մարտին Խալովը, որին դիտմամբ այսպէս սխալ է գործածել տալիս հեղինակը այդ դարձուածքը, որպէս զի ցոյց տայ նրա ընդկիւլութիւնը իրաւաբանութեան, մէջ. իսկ ինքը, Տուրգենևիկը, յաջորդ զլիւում (XIII) այդ նոյն տեղը իրաւաբանօրէն ճիշտ կերպով անուանում է „дѣрственная записъ“։

*) Մենք մեզ երբեք անսխալական չենք համարել։ Չատ ճիշտ է նկատել պ. Դաղբաշեան, որ «Արարում» 1889 թ. (և ոչ 1899-ին, ինչպէս տպուած է պ. Դաղբաշեանի յօդուածում) մենք սխալ ենք թարգմանել Намылить кому голову դարձուածքը, «մէկի զուլը իւր լսել» դարձուածքով, փոխանակ գրելու «մէկի զուլը լուալ»։ Տասը տարի հայրենիքից հեռու, Պետերբուրգում պարած լինելով՝ մենք չփոթել ենք այն ժամանակ ժողովրդական այս երկու դարձուածքերը։

լու, ուստի ինքը ստիպուել է դրուագ կամ նաշխ բառն էլ աւելացնելու (ուրեմն բառարանում պէտք է լինէր՝ «ծակծկուած, ծակոտէն» և այլն դրուագ կամ նաշխ ունեցող)։ Երկրորդ՝ որ իր թարգմանութիւնը միանգամայն սխալ է, որովհետեւ ցանցակերպ գրուագով կամ նաշխով աշտանակ՝ նշանակում է աշտանակ, որի վրայ կայ ցանցակերպ գրուագ կամ ցանցակերպ նաշխ (подсвѣчникъ съ сѣтчатой կամ сѣткообразной инкрустацией, лѣпкой, съ сѣтчатымъ узоромъ), բայց ոչ թէ աշտանակ, որի բուն մարմինը ծակծակոտ է, որի միջով լոյս կարող է անցնել (ажурный подсвѣчникъ)։ Երրորդ՝ որ աժուրի ծակոտիները կարող են և ցանցակերպ չը լինել, այլ լինել, օրինակի համար, տերեւի, անասունի կամ այլ առարկայի ձևով։ — Տեսնում ենք ուրեմն, որ պ. Դադրաշեան հէնց իր բառարանի բառով և իր լուրջ հեղինակական, «ոչ միմոսների և ծաղրածուների համար» արած թարգմանութեամբ խայտառակում է։ Հապա ինչ կը լինի բառարանը գործածողների գրութիւնը, որոնք ажурный բառի նշանակութիւնն էլ չը գիտեն և ուզում են այդ բառարանից սովորել։

Варенецъ բառի վերաբերմամբ մենք, իբրև «կաթնատրեանեա», պէտք է յայտնենք, թէ բոլորովին ճիշտ է մեր ասածը. — Փոքր-Ռուսիայում պատրաստուող варенецъ-ը թէ համով և թէ պատրաստութեան եղանակով նոյնն է ինչ որ մեր մածունը. իսկ кислое [молоко (Sauermilch, lait caillé) մածուն չէ, և միայն Անգրիկովկասում ճարահատեալից գործ է ածուում մածուն բառի համար, „мацунъ“, „мацони“ բառերի հետ միաժամանակ։

„Аблакаты“ բառի մասին մեր նկատողութիւնը հերքում է պ. Դադրաշեանը նրանով, որ Воскресенье վէպում այդ բառը «նամիկ գիւղացին գործ է ածել ինտիլիգենտ փաստաբանի համար»։ Նախ պէտք է նկատենք, որ պ. Դադրաշեանի այս յայտարարութիւնը, — մեզմ խօսելով — կամայական է։ Воскресенье վէպում, ցոյց տրուած տեղում, դատաւարտուած գիւղացին իր յանցանքի պատմութիւնն անելով ասում է „Аблакаты нанять не на что было, а потому присудили къ четыремъ годамъ“ — (Արդիկառ վարձելու միջոց չունէինք, ուստի դատաւարտեցին չորս տարուայ տաժանակիր աշխատանքի)։ Այստեղ չըկա մի խօսք, մի ցուցում, որ արդիկատը ինտիլիգենտ փաստաբան լինէր նշանակելիս, և ոչ սովորական գիւղական կեանքում յայտնի արդիկատ։ Երկրորդ՝ որ գիւղացին արդիկատ բառը կարող է գործածել անխտիր թէ արդիկատի և թէ փաստաբանի համար. բայց զրանով իրողութիւնը չէ փոխուում։ Аб-

լակատ է բառը գործ է ածուած և գրական լեզուով (որպիսի լեզուի բառարան է կազմել պ. Դաղբաշեանը)։ Իսկ գրական լեզուով աբլակատ միշտ արհամարհական նշանակութիւն ունի, որը անշուշտ հարկաւոր էր ցոյց տալ բառարանում։ Ի՞նչ պէտք է անէ պ. Դաղբաշեանի բառարանով օգտուող մարդը՝ եթէ պատահի այսպիսի խօսքերի։ «Вы аблакаты, а не адвокаты», «народъ обираютъ и кулаки, и ростовщики, и аблакаты» ևն։ Կարծենք հասկացաւ պ. Դաղբաշեանը։

Մեր նկատողութեանը, թէ պ. Դաղբաշեան ամեն մի բառի դէմ չէ գրել թարգմանական բառ և մինչև իսկ նեղութիւն չէ յանձն առել գիմել այս կամ այն բառարանի օգնութեան, (ցոյց էինք տուել օրինակներ և բառարաններ), պ. Դաղբաշեան պատասխանում է, թէ լեզուն հնարողը ժողովուրդն է. թէ չինձու բառերով ցանկալի չէ լցնել բառարանը *), թէ բառարանը ժամանակաւոր բան է և այլն։ Այս մտքերը շատ է ժանազին են — ամեն մի դպրոցական երեխայ գիտէ։ Բայց դրանցով չէ կարելի խուսափել մեր դրած հարցից։ Եթէ Նորայրի բառերը «չինձու» էին — (թէպէտ պ. Դաղբաշեանը հիանում է նոր հնարուած բազմաթիւ բառերով, որոնցից շատերը, սակայն, հէնց Նորայրի բառարանից են մտել կիրառութեան մէջ) — թող որոնէր ուրիշ աղբիւրներում։ Եթէ Նորայրի հոդապալ (== ГНОМЪ) հնարաւորն չէ հաւանել ինչո՞ւ չէ գիմել Քաջուռուտն, որի անունն, անդամ չէ տալիս (երեւի ձեռքին չ'ունենալով այս երկհատոր ընդարձակ բառարանը)։ Ինչո՞ւ չէ գիմել ժողովրդի զիցարանութեան, վերջապէս ինչո՞ւ չէ գրել օտարազգի բառը։ Պ. Դաղբաշեանը սրա դէմ էլ ունի առարկութիւն. «ամեն մի բառի դէմ անպատճառ մի հայերէն բառ դնելը *» ունի եւ այն վնասը, որ... կաշկանդում է թարգմանիչների մտքի թռիչքները, նրանց առաջ քար է դրում և թոյլ չէ տալիս նրանց ազատ մտածելու և հնարելու»։

Այս խօսքերը ինքը պ. Դաղբաշեանն է գրել։ Ուրեմն ընթերցողները դեռ երախտապարտ էլ պէտք է լինին բառարանագիր պ. Դաղբաշեանին, որ թարգմանական բառեր չէ դնում իւր բառարանում՝ իրանց մտքի թռիչքը չը կաշկանդելու համար։ Ո՛րպիսի խելացի հոգատարութիւն պ. Դաղբաշեանի կողմից։— Թէ՛ ընթերցողները գոհ կը մնան, որ իրանց մտքի

*) Մենք թոյլ էինք տուել և օտարազգի բառ դնել, որ պ. Դաղբաշեանը զանց է անում յիշել։

*) Բայց և այնպէս գլխեղբիւնի սապոնի փոխանակ դրել է «քաղցրիտ օշանակ» գոհարը և ուրիշ նմանները։

թոիչքը չէ կաշկանդուում, և թէ ինքը, պ. Դադբաշեանը, որ այսպիսի գործնական միջոցով աղատուում է բառեր փնտուելու, աշխատելու պարտականութիւնից...

Մենք վերջացրինք: Մենք զիտմամբ չը բերինք պ. Դադբաշեանի բառարանից բաղմամբիւ նոր ու պերճախօս օրինակներ մեր նկատողութիւններից ամեն մէկը նորից հաստատելու համար. որովհետեւ մենք նպատակ ունէինք քննել ոչ թէ նրա բառարանը, այլ նրա պատասխանը միայն: Եթէ մեր այս յօդուածով պ. Դադբաշեանն ու նրա բառարանը աւելի վառ գոյնով պատկերացան ընթերցողներին՝ մեզքը մերը չէ: Փաստերն են խօսում:

ՍՏ. ՄԱԼԽԱՍԵԱՆՅ

ՆՈՐ ՍՏԱՅՈՒԱԾ ԳՐԹԵՐ

- 1) „Современные армянские поэты“, подъ редакціею Льва Уманца и Аракела Дервишъ. 96 стр. цѣна 1 р. Москва 1903 г.
- 2) Հ. Ս. Երեմեան, «Տուրկին», Ազգավէպ. պատկերադարը. 82 էր. գինը 2½ ֆրանկ. Վենետիկ, 1903 թ.
- 3) «Գրիգոր Զանգեան ուսու մամուլի էջերում», թարգմ. Գ. քահ. Մկրտումեանց. 92 էր. գինը 35 կ. Ս. Պետերբ. 1902 թ.
- 4) Յովհաննէս Մալխասեան, «Հօրոտ-մօրոտ». պատկերներ իրական կեանքից. երկրորդ գիրք. 153 էր. գինը 30 կոպ. Թիֆլիս, 1903 թ.
- 5) «Ախուրեան», Հայ կանանց օրացոյց—հանդէս 1903 թ. խմբագրեց Կիկին Նուարդ Ափինեան. 122 էր. գինը 50 կոպ. Ալեքսանդրապոլ 1902 թ.
- 6) Ե. Սպիրի. «Լերան աղջիկը». նուէր մանուկներին. փոխ. օր. Մ. Ս. 124 էր. գինը 20 կ. Թիֆլիս, 1902 թ.
- 7) Տիգրան Ամիրճանեան «Ուսեալ պանդուխտ» (վանեցոց կեանքից), ամփոփեց Խ. Տէր-Յովհաննիսեանց 40 էր. գինը 15 կոպ. Թիֆլիս, 1903 թ.
- 8) Լէօ, «Գրիգոր Արծրունի», հատոր առաջին, Թիֆլիս, 1902 թ.: